# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԵԿԱՄՅԱ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ

(19 փետրվար, 2013)

Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր և մեծարգո Տիարք,

Սույնով ներկայացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թ. համառոտ գործունեությունը, որում անդրադարձ է կատարված անցնող տարում Վեհափառ Հայրապետի ընդունելություններին ու Հովվապետական այցելություններին, Մայր Աթոռի կողմից ներեկեղեցական և միջեկեղեցական ասպարեզներում իրագործված ծրագրերին, Մայր Աթոռի միաբանությանը, Սուրբ Էջմիածնի քարոզչական, կրթադաստիարակչական և սոցիալական առաքելությանը:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակություններ, ազգային, հասարակական և մշակութային գործիչներ և բազմաթիվ ուխտավորներ: Ստորև ներկայացված են առավել կարևորները.

**ա. Ընդունելություններ**

Փետրվարի 12-ին Վեհափառ Հայրապետն ընդունել է մի խումբ ավստրիացի կաթոլիկ ուսանողների՝ ուղեկցությամբ Զալցբուրգի պետական համալսարանի պրոֆեսոր, հայագետ Յասմին Դումթեղազույի:

Փետրվարի 16-ին՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Եկեղեցիների համատեղ գործողություն» Ալյանսի (ACT Alliance) սոցիալ-հոգեբանական խմբի անդամներին՝ ուղեկցությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանի:

Փետրվարի 21-ին՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ դեսպաններ Ջեյն Լիչին և Ջոնաթան Ջեյմս Էյվզին:

Փետրվարի 23-ին՝ Եվրանեստ խորհրդարանական վեհաժողովի սոցիալական, կրթության, մշակույթի և քաղաքացիական հասարակության հարցերով հանձնաժողովի պատգամավորների պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր, հանձնաժողովի համանախագահ Արտակ Զաքարյանի:

Մարտի 9-ին՝ Ճապոնիայի լիազոր նախարար, Ռուսաստանի Դաշնությունում Ճապոնիայի դեսպանատան առաքելության ղեկավարի տեղակալ Կեյոզի Իդեին:

Մարտի 10-ին՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, ՌԴ Դաշնային Ժողովի Դաշնության Խորհրդի անդամ Արթուր Չիլինգարովին:

Մարտի 21-ին՝ Հայաստանում եւ Վրաստանում նորանշանակ պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկուն:

Մարտի 28-ին՝ «Վորլդ Վիժն» կազմակերպության Միջին Արեւելքի եւ Արեւմտյան Եվրոպայի տարածաշրջանային ղեկավար Կոննի Լեննբերգին եւ Տարածաշրջանային գործառնությունների ղեկավար Դերք Բուին:

Ապրիլի 1-ին՝ Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովի գլխավորած պատվիրակությունը:

Ապրիլի 4-ին՝ Կիպրոսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էրատո Կոզակու-Մարկուլիսին:

Ապրիլի 16-ին՝ Իսրայելի Պետության Կնեսետի անդամ, Իսրայելի գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման նախարար տիկին Օրիթ Նոկեդի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի:

Ապրիլի 17-ին՝ Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովին՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Ապրիլի 18-ին՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրեն Յուկիյա Ամանոյին՝ ուղեկցությամբ ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների փոխնախարար Արեգ Գալստյանի:

Ապրիլի 20-ին՝ Գրողների միության վեցերորդ համագումարի մասնակիցներին:

Ապրիլի 21-ին՝ Ռումինիայի մշակույթի եւ ազգային ժառանգության նախարար Հունոր Կելեմենին:

Ապրիլի 22-ին՝ Բուենոս Այրեսի քաղաքապետ Մաուրիսիո Մակրիի գլխավորած պատվիրակությունը:

Նույն օրը՝ հայ գրատպության 500-ամյակի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակման միջոցառումների շրջանակներում Երեւանում անցկացվող ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 40-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին:

Ապրիլի 23-ին՝ Միլանի նահանգապետ Գվիդո Պոդեստային՝ ուղեկցությամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի եւ Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանի:

Մայիսի 5-ին՝ Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության արտաքին գործերի նախարար Լուիս Ալմադրո Լեմեսի գլխավորած պատվիրակությունը:

Մայիսի 11-ին՝ Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պատմության եւ իրավունքի ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտներին՝ գլխավորությամբ համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի եւ պաշտոնեության:

Մայիսի 13-ին՝ Քուվեյթի շեյխուհի, Քուվեյթի «Օրինակելի մայր» հիմնադրամի նա-

խագահ Շեյխա Փարիհա ալ-Ահմադ Ալ-Սաբահի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ երկու երկրների դեսպանների:

Մայիսի 17-ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Տիկահիտո Հարադային:

Մայիսի 26-ին՝ Ֆրանսիայի Հանրապետության Սենատի անդամներ Ֆիլիպ Մարինիին, Սոֆի Ժուասենին եւ Բերնար Ֆուրնիեին:

Հունիսի 10-ին՝ ԳԴՀ Բունդեսթագի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռուպրեխտ Պոլենցին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում ԳԴՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս-Յոխեն Շմիդտի:

Հունիսի 22-ին՝ «Եկեղեցիների համատեղ գործակցություն» համադաշնության (Act Alliance) գլխավոր քարտուղար Ջոն Նդունային՝ ուղեկցությամբ ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամի փնօրեն Կարեն Նազարյանի:

Նույն օրը՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս Յոխեն Շմիդտին:

Հունիսի 25-ին՝ Լիտվայի Հանրապետության Ազգային պաշտպանության նախարար տիկին Ռասա Յուկնեւիչիենեի գլխավորած պատվիրակությունը:

Հունիսի 27-ին՝ Ավստրիայի Դաշնային Հանրապետության նախագահ Հայնց Ֆիշերին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Հուլիսի 11-ին՝ Ռուսաստանի Դաշնության Դաշնային Ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի:

Հուլիսի 13-ին՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Մոսկվայի եւ հայորդյաց տան ստեղծագործական խմբերին՝ ուղեկցությամբ հայորդյաց տան տեսուչ Տ. Առաքել քահանա Ամիրյանի:

Հուլիսի 15-ին՝ ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան Հայոց թեմերի երիտասարդ ուխտավորներին՝ ուղեկցությամբ խմբերի ղեկավարներ Տ. Հակոբ քահանա Գեւորգյանի եւ Տ. Ավետիս քահանա Արովյանի:

Հուլիսի 16-ին՝ Վատիկանի Արեւելյան Եկեղեցիների Ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրիին՝ ուղեկցությամբ Հայաստանում եւ Վրաստանում պապական նվիրակ Մարեկ արքեպիսկոպոս Սոլչինսկու եւ Հայաստանում, Վրաստանում ու Արեւելյան Եւրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի:

Հուլիսի 19-ին՝ ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Դիեգո Էրնեստո Ալվարես Ռիվերային:

Հուլիսի 22-ին՝ Արգենտինայի Հայ բարեգործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանի ավարտական դասարանի սաներին՝ ուղեկցությամբ Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանի եւ Կանադայի Հայոց թեմի Տորոնտոյի ՀԲԸՄ սկաուտների խմբին եւ Ս. Երրորդություն եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շաբաթօրյա դպրոցի աշակերտներին՝ ուղեկցությամբ Տ. Գեղարդ քահանա Կարապետյանի:

Հուլիսի 24-ին՝ Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու մի խումբ ուխտավորների՝ առաջնորդությամբ Գերմանիայի Կաթոլիկ եպիսկոպոսների կոնֆերանսի խոսնակ Մատթիաս Քոփի:

Օգոստոսի 22-ին՝ ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսիին:

Օգոստոսի 27-ին՝ ՀՀ-ում Ավստրիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալոիս Կրաուտին (նստավայրը՝ Վիեննա):

Օգոստոսի 29-ին՝ «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթում Հայաստանի հաղթողներին եւ ՀՀ մարզերում ու Արցախում լավագույն արդյունք արձանագրած դպրոցականներին:

Սեպտեմբերի 5-ին՝ Արգենտինայի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Հեկտոր Մարկոս Թիմերմանի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ փոխնախարար Աշոտ Հովակիմյանի:

Սեպտեմբերի 6-ին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան Ռայներ Մորելին:

Նույն օրը՝ Իրաքի փոխվարչապետ Ռաուշ Նուրի Շաուեյսի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարարի փեղակալ Սերգեյ Մանասարյանի:

Սեպտեմբերի 19-ին՝ «Ս. Թովմա Աքվինացի» համալսարանի (Մինեսոտա, ԱՄՆ) նախագահ հայր Դենիս Դիսին եւ հոգաբարձուների խորհրդի անդամներին:

Նույն օրը՝ Բուենոս Այրեսի «Մխիթարյան վարժարան»-ի եւ Ավստրալիայի Համազգային «Արշակ եւ Սոֆի Գոլստն» ճեմարանի սաներին:

Սեպտեմբերի 23-ին՝ Հայ օգնության ֆոնդի անդամներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի:

Նույն օրը՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետության մի խումբ մտավորականների եւ թերթերի գլխավոր խմբագիրների՝ ուղեկցությամբ Եգիպտոսի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Արմեն Մազլումյանի:

Նույն օրը՝ Քրիստոնեական Միության խորհրդի Պապական խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն կարդինալ Կուրտ Կոխին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Սեպտեմբերի 24-ին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Մշակույթի եւ կրթության նախարար Շտեֆան Դորգելոհի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի:

Սեպտեմբերի 28-ին՝ Հյուսիսային Իրաքից Հայաստան ժամանած աշխարհի եզդիների հոգեւոր բարձրագույն առաջնորդ Միրե-Միրա Թախսին Բեգի գլխավորած պատվիրակությունը:

Հոկտեմբերի 2-ին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի փոխնախագահ Վոլֆգանգ Թիրզեի գլխավորած պատվիրակությունը:

Հոկտեմբերի 5-ին՝ Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովի մասնակիցներին:

Հոկտեմբերի 7-ին՝ Բուենոս Այրեսի ՀԲԸՄ փիկնանց միության անդամներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ պատվավոր անդամ Հարություն Սարաֆյանի:

Նույն օրը՝ Սիրիայի Արաբական Հանրապետության ՀԲԸՄ մասնաճյուղի անդամներին եւ Հալեպի Կիլիկյան վարժարանի հոգաբարձուներին՝ ուղեկցությամբ Դամասկոսի հայոց թեմի քաղաքական ժողովի ատենապետ, ՀԲԸՄ կենտրոնական վարչության ան-

դամ, Միջին Արեւելքի եւ Հայաստանի ծրագրերի պատասխանատու Վազգեն Յակոբյանի:

Հոկտեմբերի 8-ին՝ «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության փնօրենների խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի:

Հոկտեմբերի 11-ին՝ Լենինգրադի մարզի նահանգապետ Ալեքսանդր Դրոզդենկոյի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի եւ Սանկտ-Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանի:

Նույն օրը՝ Սլովակիայի Գերագույն դատարանի նախագահ Շտեֆան Հարաբինի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանի, ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի եւ Սլովակիայի հայ համայնքի նախագահ Աշոտ Գրիգորյանի:

Նույն օրը՝ Քյոլնի Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիների ուխտավորներին՝ գլխավորությամբ Փորցի Բողոքական եկեղեցու հոգեւոր հովիվ Կառլ Գյոփելի:

Հոկտեմբերի 12-ին՝ Մոսկվայի միջտարածաշրջանային համագործակցության, ազգային քաղաքականության եւ կրոնական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ղեկավար Յուրի Արտյուխին:

Նույն օրը՝ Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար, ՀՀ եւ ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաքսիմ Սոկոլովին՝ ուղեկցությամբ ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանի:

Հոկտեմբերի 14-ին՝ Ռիգայի քաղաքապետ Նիլ Ուշակովին՝ ուղեկցությամբ Լատվիայի Հանրապետության պատվավոր հյուպատոս Արմեն Ղասաբօղլյանի:

Նույն օրը՝ հայ-իտալական խորհրդարանական բարեկամության խմբին:

Հոկտեմբերի 17-ին՝ Իտալիայի Հանրապետության պաշտպանության նախարար, ծովակալ Ջիամպաոլո Դի Պաոլայի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Պաշտպանության փոխնախարար Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Հոկտեմբերի 24-ին՝ Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, Միացյալ ազգերի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեւային:

Նոյեմբերի 5-ին՝ Բուլղարիայի հոգեւոր առաջնորդներին՝ ուղեկցությամբ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանի եւ թեմական խորհրդի ատենապետ Ռուբեն Գրիգորյանի:

Նոյեմբերի 29-ին՝ ՌԴ Դաշնային ժողովի Դաշնային խորհրդի անդամ Նիկոլայ Ռիժկովի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի:

Նույն օրը՝ Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Դեկտեմբերի 6-ին՝ ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Իոաննիս Տայիսին:

Դեկտեմբերի 18-ին՝ ֆրանսիացի աշխարհահռչակ դերասան Ալեն Դելոնին:

**բ. Այցելություններ**

Հունվարի 30-փետրվար 8-ը Նորին Սրբությունը Հայրապետական այցով մեկնել է Ֆրանսիա եւ Անգլիա՝ հանդիպելու թեմական վարչությունների եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ:

Մայիսի 7-ին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝մասնակցելու Շուշիի ազատագրման 20-ամյակին եւ Հաղթանակի տոնին նվիրված միջոցառումներին:

Հունիսի 28-հուլիս 5-ը Հովվապետական այցով մեկնել է Մարսել՝ հանդիսապետելու Մարսելի Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու 80-ամյակի միջոցառումները:

Հուլիսի 24-ին Հայրապետական այցով եղել է Իտալիայում, հանդիպել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների հետ:

Օգոստոսի 10-15-ը Վեհափառ Հայրապետը հովվապետական այցով մեկնել է Ռումինիայի հայոց թեմ՝ հանդիսապետելու Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին վանքի վերաօծման արարողությունը եւ հիմնադրման 500-ամյակի տոնակատարությունները: Օգոստոս 11-ին Նորին Սրբությունը եղել է նաեւ Ուկրաինայի հայոց թեմում:

Սեպտեմբերի 7-15-ը Հովվապետական այցելության է մեկնել Ֆրանսիայի հայոց թեմ՝ Նիսի ծուխ:

Նոյեմբերի 6-25-ը Հայրապետական այցով մեկնել է ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ՝ հրավերով թեմական խորհրդի:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՒ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ընթացիկ տարում հրապարակվել են Հայրապետական 57 Կոնդակներ, որոնցից 3-ը՝ Հայոց Բանակի 20-ամյակի, Հայ գրատպության 500-ամյակի, Արթիկի թեմի հռչակման, 6-ը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», 9-ը՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» եւ 37-ը՝ «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանների փվչությունների առիթներով:

Հրապարակվել են նաեւ Հայրապետական 2 կոնդակ՝ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին եւ Մայր Աթոռի Հրապարակչական բաժնի տնօրեն, Վանական խորհրդի նախագահ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանին արքության պատիվներ շնորհելու առիթներով:

Անցնող տարում հաստատվել է «Ասպետ Սուրբ Էջմիածնի» շքանշանը: Հայրապետական պարգեւագրով 3 հայորդիներ արժանացել են հիշյալ պարգեւին:

Շնորհվել են նաեւ Հայրապետական 116 օրհնության գրեր տարբեր անհատների, ազգային ու հասարակական հաստատությունների:

## ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

Անցնող տարի եւս Մայր Աթոռի հարաբերությունները բնական ընթացք են ունեցել Նվիրապետական աթոռների հետ: Շարունակվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից համատեղ գործող կանոնական, սրբազասման եւ ծիսական հանձնախմբերի աշխատանքները:

Ցավով ենք անդրադառնում, որ անցյալ տարում Հայ Եկեղեցին մեծ կորուստ ունեցավ. կյանքի 93-րդ տարում վախճանվեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ



Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Մինչ նոր պատրիարքի ընտրությունը՝ Երուսաղեմի ընդհանուր միաբանական ժողովը Պատրիարքական Ընդհանուր Տեղապահ ընտրեց Գերշ. Տ. Արիս արք. Շիրվանյանին:

Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքությունում Մեսրոպ Պատրիարքի հիվանդության պայմաններում ընթացիկ գործունեությունը շարունակում է իրականացվել պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Արամ արք. Աթեշյանի գլխավորությամբ:

Անցնող տարում Մայր Աթոռի եւ Նվիրապետական Աթոռների միաբանների հարաբերությունները շարունակել են զորանալ երկուստեք փոխայցելություններով եւ համատեղ միջոցառումներով:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության թիվը 668 է, որոնցից՝ 56-ը եպիսկոպոս, 33-ը՝ վարդապետ եւ ծայրագույն վարդապետ, 61-ը՝ աբեղա, 423-ը քահանա, 95-ը՝ սարկավագ, ովքեր ծառայում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր կառույցներում:

Ցավով ենք անդրադառնում, որ անցնող տարում ի Տեր հանգյան մեր Եկեղեցու վաստակաշատ եկեղեցականներ՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական Պատվիրակ Գերշ. Տ. Աղան արք. Պալիոզյանը, Տ. Վարդան վրդ. Դիլանյանը /Վիրահայոց թեմ/, Տ. Թադեոս ավ. քհն. Տերտերյանը / Խոր Վիրապի վանք/, Տ. Բաբկեն ավ. քհն. Մազմանյան /ԱՄՆ Արեւելյան թեմ/ եւ Տ. Շմավոն ավ. քհն. Սաղոյանը /Վիրահայոց թեմ/:

Ընթացիկ տարում մեր հոգեւորականաց շարքերը համալրվեցին նոր եկեղեցականներով:

Ապրիլի 22-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանն ավարտած 7 սարկավագներ կոչվեցին քահանայության եւ օծվեցին՝ ձեռամբ Վանորեից Տեսուչ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Տիգրանյանի: Էդգար սրկ. Ամիրյանը վերակոչվեց Տ. Սեպուհ քահանա, Դավիթ սրկ. Սարգսյանը՝ Տ. Սամուել քահանա, Ջավեն սրկ. Խաչիկյանը՝ Տ. Ռափայել քահանա, Արտակ սրկ. Գաբրիելյանը՝ Տ. Սեւակ քահանա, Լեւոն սրկ. Հախվերդյանը՝ Տ. Մինաս աբեղա, Վարուժան սրկ. Հակոբյանը՝ Տ. Բարդուղիմեոս քահանա եւ Հայկ սրկ. Սմբատյանը՝ Տ. Հուսիկ աբեղա:

Դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնի օրը, հընթացս Ս. Պատարագի, Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը կատարեց Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի 33 սաների, ինչպես նաեւ Արարատյան Հայրապետական թեմի եւ Տավուշի թեմի 2 դպիրների սարկավագական ձեռնադրություն:

Համաձայն իրենց դիմումների, հոգեւոր ծառայությունից հրաժարվելու, կարգազանցությունների ու դասալքությունների՝ Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ են հռչակվել եւ աշխարհականների դասին կարգվել հինգ եկեղեցականներ.

Հունվարի 13-ին՝ Տ. Արթուն ավագ քահանա Սմբատյանը՝ (ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմ)՝ եկեղեցականի համար սահմանված թաղման կարգով հուղարկավորվելու եւ քահանայական կարգից հրաժարվելու իր դիմումի հիման վրա:

Մարտի 20-ին՝ Տ. Նահապետ քահանա Խաչատրյանը (Տավուշի թեմ)՝ հովվական իր ծառայությունը լքելու եւ եկեղեցական ասպարեզից ինքնակամ հրաժարվելու համար:

Ապրիլի 14-ին՝ Տ. Սարգիս քահանա Մելքոնյանը (Շվեդիա)՝ ծառայության ընթացքում դրսեւորած կարգազանցության եւ եկեղեցականի վարքին անհարիր ընթացքի համար:

Հունիսի 12-ին՝ Տ. Սմբատ աբեղա Պողոսյանը (Շիրակի թեմ)՝ ծառայության ընթացքում դրսեւորած եկեղեցականին անհարիր վարքագծի համար:

Հուլիսի 21-ին՝ Տ. Արշեն քահանա Սարգսյանը՝ (Շիրակի թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի հիման վրա:

2012 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում եւ թեմերում Վեհափառ Հայրապետի փնօրհնությամբ կատարվել են 23 նշանակումներ.

2012թ. դեկտեմբերի 24-ից Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական Պատվիրակ է նշանակվել Գերշ. Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը:

Հոկտեմբերի 24-ին Հայրապետական սրբատառ կոնդակով Արթիկի տարածաշրջանի եկեղեցական 23 համայնքներն առանձնացվելով Շիրակի թեմի կազմից, հիմնվել է Արթիկի թեմը եւ նորաստեղծ թեմի առաջնորդի պաշտոնում համապատասխան կարգով ծառայության է կոչվել Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Ֆրանսիայի հայոց թեմի սպասավոր Տ. Կարապետ վարդապետ Հարությունյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմում՝ ընդ իշխանությամբ թեմակալ առաջնորդի, իսկ Տ. Եղիա աբեղա Խաչատրյանը, ավարտելով Փարիզի Կաթոլիկ համալսարանում իր ուսումնառությունը, նշանակվել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի ուսումնական գծով փոխտեսուչ:

Տ. Տիրան աբեղա Պետրոսյանն ազատվել է Շվեյցարիայի հայոց թեմում ստանձնած իր պարտականություններից եւ ծառայության կոչվել Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակությունում՝ որպես Հայրապետական պատվիրակի պաշտոնակատար,

Տ. Կորյուն աբեղա Առաքելյանը ծառայության է կոչվել Արմավիրի թեմում:

Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը, ազատվելով Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսչի պարտականություններից, ծառայության է կոչվել Արագածոտնի թեմ՝ ընդ իշխանությամբ թեմակալ առաջնորդի:

Մայր Աթոռի հյուրընկալ Տ. Միխիթար աբեղա Գրիգորյանը ծառայության է կոչվել Ուկրաինայի հայոց թեմում՝ որպես Ղրիմի առաջնորդական փոխանորդ եւ Սուրբ Խաչ վանքի վանահայր:

Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ Զինված Ուժերում, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում՝ որպես Ծիսական-հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու:

Տ. Ահարոն աբեղա Շահվերդյանը նախ նշանակվել է Սեւանի Վազգենյան դպրանոցի փոխտեսուչ, ապա՝ Քահանայից պատրաստման լսարանի վերակացու:

Տ. Հուսիկ քահանա Սարգսյանը, ազատվելով Մայր Աթոռի Դիվանատանը ստանձ-

նած պարտականություններից, նշանակվել է Ֆրանսիայի հայոց թեմ՝ ընդ իշխանությամբ թեմակալ առաջնորդի:

Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը, ազատվելով Հառիճավանքի ընծայարանի տեսչի պարտականություններից, ստանձնել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսչի պարտականությունները: Հառիճավանքի ընծայարանի տեսուչ է նշանակվել ընծայարանի փոխտեսուչ Տ. Նշան աբեղա Հմայակյանը:

Տ. Գառնիկ աբեղա Մխիթարյանը եւ Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը ծառայության են նշանակվել Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական Պատվիրակության՝ համապատասխանաբար Հռոմի եւ Միլանի հոգեւոր հովվություններում:

Տ. Առեն վարդապետ Շահինյանը, ազատվելով Միլանի հոգեւոր հովվի պարտականություններից, ծառայության է նշանակվել նախ Գեղարքունյաց թեմում, ապա Արագածոտնի թեմի Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցում:

Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը, ազատվելով Ուկրաինայի հայոց թեմի Ղրիմի առաջնորդական փոխանորդի եւ Սուրբ Խաչ վանքի վանահոր պարտականություններից, նշանակվել է Շվեյցարիայի հայոց թեմում՝ որպես Ժնեւի եւ Լեմանի շրջանի Ս. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ:

Տ. Սահակ աբեղա Շաքարյանը, ավարտելով հովվական ծառայությունը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում, ծառայության է կոչվել Արցախի թեմում որպես Մարտունու շրջանի հոգեւոր հովիվ:

Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, ավարտելով ծառայությունը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում, նշանակվել է Վանաձորի Հայորդյաց տան հոգեւոր հովիվ:

Տ. Զոհրապ քահանա Մազմանյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ Զինված Ուժերում, իր հոգեւոր սպասավորությունը շարունակում է Վիրահայոց թեմի Թբիլիսիի Ս. Գեւորգ Եկեղեցում՝ որպես լուսարարապետ:

Տ. Մովսես քահանա Աշուրյանը, ազատվելով Գուգարաց թեմում ստանձնած ծառայություններից, նշանակվել է հոգեւոր սպասավորության Վիրահայոց թեմի Մառնեուլիի շրջանում:

Տ. Օշական քահանա Խաչատրյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ Զինված Ուժերում, հովվական ծառայության է կոչվել Ռումինիայի հայոց թեմում:

Տ. Բարդուղիմեոս քահանա Հակոբյանը, ազատվելով Վայոց Ձորի թեմում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Բուլղարիայի հայոց թեմի Վառնայի Ս. Սարգիս եկեղեցում:

Տ. Կոմիտաս քահանա Տիգրանյանը ծառայության է կոչվել Վայոց Ձորի թեմում:

Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում սպասավորող Տ. Հովսեփ քահանա Ալեքսանյանը ծառայության է կոչվել Կոտայքի թեմի Կեչառիս վանական համալիրում, իսկ Տ. Ստեփանոս քահանա Հովհաննիսյանը՝ Սյունյաց թեմում:

Տ. Ռաֆայել քահանա Խաչիկյանը հոգեւոր ծառայության է անցել Սյունյաց թեմում, իսկ Տ. Սեւակ քահանա Գաբրիելյանը՝ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմից Տ. Խաղ քահանա Ղազարյանը ծառայության է կոչվել Բուլղարիայի հայոց թեմում, իսկ Տ. Սեպուհ քահանա Ամիրյանը՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցում:

Անցնող տարում Մայր Աթոռի բաժիններն իրենց ենթաբաժիններով /ընդհանուր՝ 51/ , որոնցում ծառայում են 1174 անձինք՝ 142 եկեղեցականներ եւ 1032 աշխարհականներ, արդյունավոր կերպով կատարել են իրենց աշխատանքները՝ ապահովելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենսագործունեությունը:

Անցյալ տարվա ընթացքում կատարվել են նաեւ Մայր Աթոռի կառույցների աշխարհիկ նոր անդամների փոփոխություններ եւ նոր նշանակումներ:

Մայր Աթոռի Ֆինանսական բաժնի տնօրեն Տիկին Մարինե Ղազարյանը իր դիմումի համաձայն ազատվել է իր սպասնձնած պարտականություններից: Ֆինբաժնի տնօրեն է նշանակվել տիկին Սոֆյա Հովհաննիսյանը, «Ս. Ներսես Մեծ» գիտաբժշկական կենտրոնի գործադիր տնօրեն Տիար Արթուր Ավագյանին փոխարինել է Տիար Արմեն Մուրադյանը:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցնող տարում կանոնավոր գումարվեցին քահանայից եւ միաբանական հավաքներ, Գերագույն Հոգեւոր Խորհուրդի եւ Թեմական-ներկայացուցչական ժողովներ:

Փետրվարի 15-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանության եւ հայաստանյան թեմերի քահանա հայրերի մասնակցությամբ, տեղի ունեցավ Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով գումարվող քահանայից ավանդական ամենամյա հավաքը: Քահանայից հավաքին մասնակցեցին Հայաստանի եւ Սփյուռքի 230 եկեղեցականներ՝ օրակարգի նյութ ունենալով «Քահանայի եկեղեցական-սոցիալական աշխատանքի հիմնական դերակատարությունը» թեման:

Հավաքից հետո Վեհափառ Հայրապետի կողմից առավել արդյունավետ ծառայություն իրականացնող քահանաներն արժանացան լանջախաչի եւ ծաղկյա փիլոնի:

Հունիսի 2-ին Մայր Աթոռում գումարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական վեցերորդ հավաքը: Միաբանական հավաքին մասնակցեցին 81 միաբաններ /աբեղա, վարդապետ, ծայրագույն վարդապետ/: Միաբանական հավաքին մասնակցում էին նաեւ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից:

Եռօրյա համագումարի քննարկման նյութ էր ընտրված «Էլեկտրոնային միջոցների կիրառությունը հոգեւոր քարոզչության առաքելության մեջ» թեման: Քննարկումների ընթացքին անդրադարձ կատարվեց հոգեւոր հովվի եւ համայնքի անդամների միջեւ հաղորդակցության զորացման նպատակով համացանցի առավել լայն կիրառությանը, հոգեւոր-քարոզչական բնույթի նյութերի համացանցային գրավիչ մատուցմանը, նաեւ համացանցային վտանգների նվազեցմանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները մասնակցեցին նաեւ Ս. Հռիփսիմյանց, Ս. Գայանյանց, Ս. Գրիգոր Լուսավորչի եւ Ս. Էջմիածնի տոների առիթով կազմակերպված ուխտագնացություններին, թափորներին եւ տոնական միջոցառումներին:

Միաբանական նախորդ համագումարները գումարվել են 1988, 2001, 2003, 2006, 2010 թվականներին:

Նոյեմբերի 1-3-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվեց Թեմական-ներկայացուցչական չորրորդ ժողովը, որն անդրադար-

ձավ եկեղեցական եւ ազգային կյանքում առկա մի շարք հարցերի ու խնդիրների: Ժողովին մասնակցում էին Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունների ներկայացուցիչները, Հայաստանի եւ Սփյուռքի երեսուներկու թեմերի առաջնորդները, Հայրապետական պատվիրակությունների ու թեմերի աշխարհական ներկայացուցիչները եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները: Ժողովին մասնակցություն ունեցան եւ իրենց ուղերձները հղեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նոյեմբեր 1-ի նիստերին ժողովականները քննարկեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություններ) հետ հարաբերությունների մասին զեկույցը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության մասին տեղեկություններ հաղորդեցին Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Անդրադառնալով Երուսաղեմի Ս. Աթոռի կարեւոր պատմական առաքելությանը Սրբոց Տեղյաց պահպանության գործում՝ ժողովականներն Աստծու զորակցությունը մաղթեցին Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պատրիարքական տեղապահին՝ առաջիկա պատրիարքական ընտրությունների կազմակերպման գործում: Ժողովը նաեւ ընդգծեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կարեւոր դերակատարությունը Թուրքիայում հայության ազգային-եկեղեցական կյանքում: Մտահոգություն հայտնելով Պատրիարքության ներկայիս կացության եւ Կ.Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի առողջական վիճակի առնչությամբ, ժողովը որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ թելադրել Կ.Պոլսի կրոնական ժողովին՝ կազմակերպելու պատրիարքական ընտրություններ՝ ի խնդիր Կ.Պոլսո Հայոց Պատրիարքության Աթոռի զորացման եւ Թուրքիայի հայության պայծառության:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով Հայոց Եկեղեցու միջոցառումների համադրման եւ կազմակերպման հանձնաժողովի նախագահ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը ժողովին ներկայացրեց միջոցառումների առաջարկները: Քննարկումների ընթացքում հանձնաժողովին հանձնարարվեց լրամշակել եւ կյանքի կոչել շուրջ երեք տասնյակ ծրագրեր:

Նոյեմբերի 2-ի նիստերին Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից ստեղծված Սրբադասման հանձնախմբի կատարած աշխատանքների մասին զեկույց ներկայացրեց հանձնախմբի համատեղնապետ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Սրբազան Հայրն անդրադարձավ սրբադասման սկզբունքների, կանոնի եւ ծեսի մշակման հարցերին, մասնավորապես Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման խնդրին: Ժողովականները, ողջունելով հանձնաժողովի ցարդ կատարած ուսումնասիրությունները, քննարկումների ընթացքում ներկայացրեցին իրենց առաջարկները եւ հորդորեցին շարունակել հանձնաժողովի գործունեությունը՝ հրապապ նկատելով Ցեղասպանության անմեղ զոհերի սրբադասումը:

Թեմերում 2009 թ. Թեմական-ներկայացուցչական ժողովի կողմից ընդունված թեմական կանոնադրության ուղենիշի որդեգրման վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Քննարկումների ընթացքում

վերահաստատվեց կանոնական եւ միասնական սկզբունքների վրա եկեղեցական կյանքի կազմակերպման անհրաժեշտությունը եւ, նկատի ունենալով, որ որոշ թեմեր դեռ չեն ավարտել ուղենիշի որդեգրման աշխատանքները, որոշվեց մեկ տարով երկարացնել ուղենիշի հոդվածները թեմական կանոնադրություններում ներդնելու ժամկետը:

Նոյեմբերի 3-ի նիստին անդրադառնալով Հայ Եկեղեցու Սահմանադրության ամբողջացման խնդրին՝ ժողովը թելադրեց արդեն իսկ ստեղծված հանձնաժողովին՝ հետամուտ լինելու Սահմանադրության՝ Ազգային-եկեղեցական ժողովի, Գերագույն հոգեւոր խորհրդի, Եպիսկոպոսաց ժողովի եւ Թեմական-ներկայացուցչական ժողովի գլուխների մշակմանը: «Թեմական ներկայացուցչական ժողով» անունը վերանվանվեց Հայ Եկեղեցու Եկեղեցական-ներկայացուցչական ժողով, ինչպես նաեւ սահմանեցին ժողովի պատգամավորների կազմը՝ 1/3 հոգեւորական եւ 2/3 աշխարհական հարաբերակցության սկզբունքով:

Ժողովին Սիրիայում ստեղծված կացության եւ սիրիահայ համայնքի վիճակի մասին զեկուցեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը: Ժողովը մտահոգություն հայտնեց Սիրիայում շարունակվող հակամարտության եւ ժողովրդի կրած կորուստների կապակցությամբ՝ իր զորակցությունը բերելով Սիրիայի հայ համայնքին: Գոհունակությամբ նշվեց սիրիահայության եւ Սիրիայում ազգային-եկեղեցական կառույցներին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ հայրենի իշխանությունների կողմից ցուցաբերված օգնության համար, այլեւ կոչ արվեց թեմերին եւ ազգային հաստատություններին շարունակելու իրենց զորակցությունը բերել հայ համայնքին՝ առկա կարիքները հոգալու եւ կրած կորուստները վերականգնելու համար:

Հավարտ Ժողովի՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ժողովի մասնակիցներին կատարված նախանձախնդիր աշխատանքի համար՝ վստահություն հայտնելով, որ սույն ժողովում առնված որոշումները պիտի ծառայեն մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի զորացմանը եւ Հայոց Եկեղեցու առաքելության արդյունավոր իրագործմանը:

Թեմական-ներկայացուցչական ժողովներ/ այսուհետ՝ Եկեղեցական-ներկայացուցչական ժողով/ գումարվել են 1997, 2003, 2009 թվականներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում անցնող տարում գումարվել են նաեւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի երկու ընդլայնված ժողովներ /փետրվար 28-ից մարտ 1 եւ հոկտեմբեր 30-31/, ԳՀԽ-ի տեղական ժողովներ եւ Հայաստանյան թեմակալ առաջնորդների հավաքներ: ԳՀԽ ժողովներին քննության են առնվել Նվիրապետական աթոռներին, Եպիսկոպոսաց ժողովի կազմակերպանը, Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումներին, Հայ Եկեղեցու Սահմանադրության գլուխների լրամշակման, Թեմական կանոնադրությունների ներդրման գործընթացին, ազգային-հոգեւոր կյանքում տեղ գտած խնդիրներին առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ:

## ՀՈԳԵՒՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Անցնող տարում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունը բարի արգասավորում ունեցավ նաեւ հոգեւոր-մշակութային մարզում:

Անցնող տարվա հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռում Նորին Սրբության հանդիսապետությամբ եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգս-

յանի պեղի է ունեցել լոնդոնաբնակ մեծանուն բարերարներ պեր եւ փիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների հովանավորությամբ կառուցված «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի բացումը:

Հոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվել է մոմավառության սրահի եւ կաթողիկոսական դամբարանի հողօրհնեքի արարողությունը: Կառույցի բարերարներն են պեր եւ փիկին Գառնիկ եւ Անի Յակոբյանները (ԱՄՆ):

Օգոստոսի 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսապետել է Ռումինիայի հայոց թեմի Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին վանքի վերաօծման արարողությունը, որին ներկա են եղել Ռումինիայի Հանրապետության Կրոնի նախարար Վիկտոր Օբասկին, Քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, Սուչավայի նահանգային իշխանության անդամներ, Հաճկատար Ս. Աստվածածին եկեղեցու նորոգությունն ստանձնած ամերիկաբնակ բարերարներ մեծազնիվ պեր եւ փիկին Հակոբ եւ Իզա Գույումճյանները, հայ եւ ռումին բազմաթիվ ուխտավորներ:

Փետրվարի 19-ին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ կատարվել է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի Ս. Մարիամ Աստվածածին նորակառույց եկեղեցու օծման արարողությունը: Նոր եկեղեցին սկսել է կառուցվել 2007-ից՝ բարերարությամբ ծնունդով վաղուհասցի, ռուսաստանաբնակ գործարար Տիար Գրիգորի Հայրապետյանի:

Մարտի 20-ին Արցախի Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում, թեմակալ առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ, կատարվել է Ս. Գեւորգ եկեղեցու հիմնարկեքը: Եկեղեցին կառուցվում է ՊԲ զորամասերից մեկի հրամանատար, գնդապետ Նորայր Ասլանյանի նախաձեռնությամբ:

Հունիսի 2-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, օծվել է Վրաստանի Մառնեուլիի շրջանի Կարմիր գյուղի Սրբոց Ավետարանչաց նորակառույց մատուռը: Մատուռը կառուցվել է Կարմիր գյուղի համայնքի անդամ Տիար Վիլիկ Խաչատուրյանի նախաձեռնությամբ, առաջնորդարանի եւ համայնքի անդամների աջակցությամբ:

Հունիսի 9-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի Յակուտսկ քաղաքում ձեռամբ կատարվել է եկեղեցու հիմնօրհնեքի արարողություն:

Հունիսի 25-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանի ձեռամբ կատարվել է Սյունյաց թեմի Տոլորս համայնքի Ս. Հռիփսիմե եկեղեցու հիմնարկեքը:

Հուլիսի 14-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, վերաօծվել է Ախալքալակի շրջանի Կարծախ գյուղի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին:

Օգոստոսի 25-ին՝ ձեռամբ Արագածոտնի թեմի Առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի կատարվել է Ապարանի տարածաշրջանի Վարդենիս գյուղի Ս. Հակոբ եկեղեցու օծման եւ բացման արարողությունները:

Սեպտեմբերի 22-ին, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, օծվել է Ծովինար համայնքի Ս. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցու բարերարն է ՀՀ ԱԺ պատգամավոր փիար Հակոբ Հակոբյանը:

Հոկտեմբերի 20-ին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի ձեռամբ կատարվել է Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Չկալով գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու վերաօծման արարողությունը:

Հոկտեմբերի 21-ին Արմավիրի թեմի Աղավնատուն համայնքում ձեռամբ թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի կատարվել է նորակառույց Ս. Աննա եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին կառուցվում է մոսկվաբնակ Տիար Վահան Ավագյանի ազնիվ բարերարությամբ:

Նոյեմբերի 17-ին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ օծվել է Գավառի Ս. Կարապետ եկեղեցին:

Նոյեմբերի 22-ին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի ձեռամբ օծվել է Վանաձորի Խնձորուտ թաղամասի Ս. Վարդան Զորավար եկեղեցին: Վերակառուցման նախաձեռնողներն են Մարտուն և Արեն Աղաբաբյանները:

Դեկտեմբերի 1-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանի ձեռամբ կատարվել է Սյունյաց թեմի Տոլորս համայնքի Ս. Հռիփսիմե եկեղեցու օծման արարողությունը:

Մարտի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ տեղի ունեցավ միջոցառում Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնի գործունեության մի ամյակի կապակցությամբ: Քարոզչական կենտրոնի պատասխանատուն էր Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը:

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի ունեցավ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2012 թ. հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը, որի ընթացքում լավագույն ճանաչված մանկավարժները մրցանակների արժանացան: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ ԿԳ նախարարության և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության ներկայացուցիչներ, Կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ:

«Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթը Մայր Աթոռի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվում է 2004 թվականից: Մրցույթը կազմակերպվում է հովանավորությամբ Մայր Աթոռի բարերար ամերիկաբնակ Սիլվա Տեր-Ստեփանյանի:

«Լավագույն ուսուցիչ» մրցույթի համակողմանի արդյունավետությունն ապահովելու և որակական չափանիշներն ավելի բարձրացնելու նպատակով ՔԴԿ և ԿԳՆ մասնագետների անդամակցությամբ կազմավորված «Լավագույն ուսուցիչ» մրցույթի կազմկոմիտեն վերահսկել է մրցույթի ամբողջ ընթացքը: Մրցույթի մարզային և հանրապետական փուլերի նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներին մասնակցել են ՔԴԿ աշխատակիցները՝ որպես հանձնախմբերի անդամներ:

Դեկտեմբերի 14-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և մասնակցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի, Մայր Աթոռի Հայրորդյաց տանը տեղի ունեցավ հայ գրատպության 500-ամյակին նվիրված «Գրերի գյուտից մինչև գրատպություն» հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր ցերեկույթը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴԿ-ի ՀՀ ԿԳՆ նախաձեռնած մրցույթն անցկացվել է երեք փուլով՝ տարածաշրջանային, մարզային, հանրապետական: Ընդհա-

նուր առմամբ մրցույթին մասնակցեցին շուրջ 450 դպրոցներ, որոնց կարելի է գումարել շուրջ 100 արտամրցութային դպրոցների մասնակցությունը:

Հանրապետական փուլին ներկայացան ՀՀ մարզերում եւ Երեւանում լավագույնը ճանաչված պասներկու դպրոցներ, որոնցից ընտրվեցին լավագույնները «Լավագույն սցենար», «Լավագույն երաժշտական կատարում», «Լավագույն բեմադրություն» անվանակարգերում եւ գլխավոր՝ «Հայրապետական մրցանակ»-ի համար, իսկ մյուս մասնակից դպրոցների համար սահմանվեցին խրախուսական հատուկ մրցանակներ:

Պարգեւների արժանացան ինչպես հաղթող, այնպես էլ հանրապետական փուլին մասնակցություն բերած բոլոր դպրոցները:

Հայ գրատպության 500-ամյակի եւ «Երեւանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը, որի ընթացքում ընթերցվեց է Նորին Սրբության Հայրապետական Սրբատառ Կոնդակը՝ գրված գրատպության 500-ամյակի առիթով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու ՀՀ Մշակույթի նախարարության համատեղ ջանքերով կազմակերպված համաժողովին մասնակցում էին Հայաստանի եւ Սփյուռքի, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու Նվիրապետական աթոռների ներկայացուցիչներ: Համաժողովում Մայր Աթոռի ներկայացուցիչն էր Տ. Արարատ քհն. Պողոսյանը, ով պատշաճ կերպով իրագործեց բոլոր կազմակերպչական աշխատանքները:

Ընթացիկ տարում կազմակերպվել են նաեւ այլ գիտաժողովներ, առանձին նյութերի շուրջ քննարկումներ, օլիմպիադաներ եւ մշակութային պարբեր միջոցառումներ:

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընթացիկ տարում բնականոն կերպով շարունակվել են Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի հարաբերությունները քույր եկեղեցիների հետ: Այս ընթացքում Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի կողմից կազմակերպվել են մի շարք այցելություններ եւ միջոցառումներ:

1. Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը հունվարի 16-ից 23-ը Ադիս Աբեբայում մասնակցել է «Հաղորդություն եւ հաղորդակցություն» թեմայով Կաթոլիկ եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային միացյալ հանձնախմբի քննարկումներին:

2. Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը հունվարի 24-25-ը Ժնեւում մասնակցել է Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի Կենտրոնական կոմիտեի հանդիպմանը:

3. Գերշ. Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը մարտի 29-ից մինչեւ ապրիլի 2-ը Մյունխենում (Գերմանիա) մասնակցել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք եւ Կարգ» հանձնախմբի հերթական ժողովին:

4. Գերշ. Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Գերշ. Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը մայիսի 30-31-ը Աստանայում մասնակցել են Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների «Խաղաղությունն ու համերաշխությունը՝ որպես մարդկության ընտրություն» խորագրով Դ. համաժողովին:

5. Գերշ. Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը եւ տիկին Փոլա Տեր-Մաթոյանը Օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը Կրետեում մասնակցել են Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական կոմիտեի նիստին, որը կրել է «Կյանքի Աստված, ցույց տուր մեզ արդարության եւ խաղաղության ճանապարհը» խորագիրը:

6. Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը սեպտեմբերի 5-8-ը Իտալիայի Բոզե վանական համալիրում մասնակցել է «Մարդն իբրեւ արարչագործության պահապան» խորագրով 20-րդ միջազգային էկումենիկ կոնֆերանսին:

7. Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի նախագահությամբ նոյեմբերի 27-28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել «Դիակոնիայի ուսուցում» թեմայով համաժողով:

8. Հոգշ. Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը դեկտեմբերի 4-6-ը Բոսսեի Էկումենիկ ինստիտուտում (Շվեյցարիա) մասնակցել է էկումենիկ պաշտոնյաների ժողովին:

## ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ա. Գեւորգյան Հոգեւոր ճեմարան

ԳՀՃ-ի տեսուչն է Գերշ. Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը: Ճեմարանում դասավանդում են 67 դասախոսներ, որոնցից 26-ը հոգեւորականներ են, 41-ը՝ աշխարհական: 2011-2012 ուսումնական տարում ճեմարանի դասախոսական կազմը համալրվել է նոր դասախոսներով:

2012-2013 ուսումնական տարեսկզբին ճեմարանում բացվել են 2 ամբիոններ՝ «Աստվածաբանության ամբիոն» եւ «Պատմական աստվածաբանության եւ հումանիտար առարկաների ամբիոն», որոնց շնորհիվ ճեմարանի կրթությունը համապատասխանեցվում է բուհական չափանիշներին: Մեծ ուշադրություն է դարձվել լեզուների ուսուցմանը: Ճեմարանում գրաբար, անգլերեն, գերմաներեն լեզուների ֆակուլտատիվ (արտալսարանական) պարապմունքներ են իրականացվել: Բակալավրիատի ավարտական պետական քննությունների ցանկում ավելացել են 2 նոր առարկաներ՝ գրաբարը եւ Ս. Գիրքը:

Դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Ստեփանոսի տոնին, Ե. լսարանի 33 սաներ եւ թեմերի 2 թեկնածուներ ձեռնադրվեցին սարկավագ:

2012 թ. ճեմարանն ավարտել են 21 սաներ, որոնք հոգեւոր ծառայության են կոչվել Մայր Աթոռի տարբեր բաժիններում: Ընթացիկ տարում կազմակերպվել է նաեւ 10 շրջանավարտների ավարտաճառերի պաշտպանություն:

2012-2013 ուստարում 20 հոգի ընդունվել են Ա. լսարան: Ներկայումս ճեմարանում ուսանում են 126 սաներ:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում գործում է Քահանայից պատրաստման լսարանը՝ բաղկացած 32 անձերից, որոնք տեղաբաշխված են երեք լսարաններում:

### բ. Սեւանի Վազգենյան Հոգեւոր դպրանոց

2012 թ. սկզբին ՍՎՀԴ-ի տեսչի ժամանակավոր պաշտոնակատարն էր Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանը, սեպտեմբերից տեսուչ նշանակվեց Տ. Հարություն արեղ. Կիրակոսյանը: Դպրանոցում դասավանդում են 29 դասախոսներ, որոնցից 11-ը հոգեւորական-

ներ են, իսկ 18-ը՝ աշխարհական: Ներկայումս դպրեվանքում ուսանում են 51 սաներ: 2012-2013 ուս. տարում դպրանոցի ուսումնական կազմը համալրվել է նոր դասախոսներով:

Պետական քննությունները հաջողությամբ հանձնելով՝ Դ. լսարանի 13 սաներ տեղափոխվել են ԳՀՃ Ե. լսարան:

Դասերին զուգահեռ կազմակերպվել են տարբեր դասախոսություններ, ուխտագնացություններ, միջոցառումներ եւ հանդիպումներ երիտասարդական միությունների, ուսանողների, հոգեւոր, հասարակական եւ մշակութային գործիչների հետ:

Սուրբ Ստեփանոս Նախավկա սարկավագի տոնին, Վազգենյան դպրանոցի Բ. եւ Դ. լսարանի սաները, ձեռամբ Գերշ. Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, ստացան դպրի եւ ուրարակրի աստիճաններ:

**գ. Հառիճավանքի Թ-րբանճյան ընծայարան**

Հառիճավանքի ընծայարանի տեսուչն է Հոգշ. Տ. Նշան աբղ. Հմայակյանը: 2012 թ. սեպտեմբերի 1-ից Հառիճավանքի վանական համալիրն ու Թ-րբանճյան ընծայարանը Շիրակի թեմի կազմից հանձնվել են Մայր Աթոռին: Ընծայարանում դասավանդում են 15 դասախոսներ, իսկ սաների թիվը 39-ն է:

ՀՀ Կրթության եւ Գիտության նախարարությունից հանրակրթական ավագ դպրոցի դասընթացներ իրականացնելու լիցենզիա ստանալու նպատակով հոկտեմբեր ամսին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաշվառվել է «Հառիճավանքի Թ-րբանճյան ընծայարան» հաստատություն հիմնարկը եւ ձեռք է բերվել պետական գրանցման վկայական:

Հառիճավանքի ընծայարանում ինֆորմատիկայի դասընթացներ կազմակերպելու նպատակով դեկտեմբեր ամսին ուսումնական մասնաշենքի լսարաններից մեկը համալրվել է համակարգիչներով:

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչն է ԳՀՃ տեսուչ Գերշ. Տ. Գեւորգ եպս. Սարոյանը:

**դ. Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարան եւ Դավթյան օրհօրդաց դպրոց**

Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչն է հնդկահայոց հոգեւոր հովիվ Հոգշ. Տ. Խորեն վարդապետ Հովհաննիսյանը:

Անցած տարում Ճեմարանի ղեկավարության կողմից շեշտադրումը եղել է կրթության որակի բարձրացման, երեխաների կենցաղային պայմանների առավել բարելավման եւ շինարարական-վերանորոգչական աշխատանքների վրա:

Ճեմարանն ունի 57 աշխատակիցներ, Հայոց մարդասիրական ճեմարանի կեցության եւ խնամքի տակ գտնվող աշակերտների եւ ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 61՝ 15 աղջիկ եւ 46 տղա: Նրանցից 37-ը Հայաստանից են, 20-ը՝ Իրանից, 1-ը՝ Իրաքից, 3-ը՝ Հնդկաստանից:

2012-2013 ուսումնական տարում ճեմարանում աշխատում են Հայաստանից ժամանած 4 ուսուցիչ:

2012 թվականի ընթացքում ճեմարանի հարկից ներս իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ: Սաները կանոնավոր կերպով մասնակցել են եկեղեցական արարողությունների եւ ուխտագնացությունների: Ճեմարանում կազմակերպվել են գիտության տարբեր ոլորտներին վերաբերող մրցույթներ, գրական-երաժշտական ցերեկույթներ:

Ճեմարանի գրադարանը գտնվում է բարվոք վիճակում եւ աշակերտները հնարավորություն ունեն ընթերցելու ամեն ամիս ստացվող հայերեն եւ անգլերեն պարբերականները, իսկ օրվա լուրերին ծանոթանում են տեղական թերթերից:

**ե.Քարոզչություն Հայորդյաց տներում**

Հայորդյաց տների հոգեւոր տեսուչն է Հոգշ. Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը:

Համակարգում ներգրավված են 6 հայորդյաց տներ (Էջմիածնի, Աշտարակի, Վանաձորի, Երեւանում՝ Նորքի, Մալաթիայի եւ Արաբկիրի), Մանրանկարչության արվեստի կենտրոնը եւ Աղվերանի «Մասիս» պանսիոնատը:

Հայորդյաց տներում, ուր հաճախում են գրեթե 2600 երեխաներ եւ պատանիներ, կազմակերպվել են բազմաբնույթ մեծ եւ փոքր միջոցառումներ, ցուցահանդեսներ, համույթների մենահամերգներ, հանդիսություններ, մրցույթներ, վիկտորինաներ: Իրականացվել են դասալսումներ, մեթոդական քննարկումներ, կիսամյակային ստուգարքներ եւ տարեվերջյան քննություններ: Մայր Աթոռի նախաձեռնությամբ հիմք է դրվել հայորդյաց տներում արտելներ ստեղծելու գործընթացին: ՀՏ-երի սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված եկեղեցական եւ պետական տոներին, կազմակերպվել են մրցույթ ցուցահանդեսներ:

Տարվա ընթացքում բոլոր հայորդյաց տներում իրականացվել է ընդհանուր թվաքանակով 278 միջոցառում:

## ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարում Մայր Աթոռը շարունակել է քարոզչական ընդգրկուն գործունեություն իրականացնել ազգային մեր կյանքի տարբեր ոլորտներում՝ հանրակրթության ոլորտում, երիտասարդության շրջանում, Հայորդյաց տներում, Զինված ուժերում եւ քրեակատարողական հիմնարկներում: Հավատացյալների հոգեւոր կարիքները բավարարելու նպատակով համապատասխան գրականության լույս ընծայումով արդյունավետ քարոզչություն է իրականացվում Մայր Աթոռի հրատարակչական բաժնի կողմից: Առավել լայն լսարանի համար քարոզչություն է իրականացվում համացանցի, հեռուստա-ռադիո հաղորդաշարերի եւ «Շողակաթ» եւ «Լույս» հեռուստաընկերությունների միջոցով:

Ուրախությամբ ենք անդրադառնում մեծ արձագանք գտած «Մեկ օր մեկ թեմում» քարոզչական ծրագրին, որը մեկնարկեց տարվույս հունիսի 8-ին: Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ 130 միաբաններ եւ թեմերի քահանա հայրեր մեկօրյա քարոզչականհովվական առաքելություն իրականացրեցին Արմավիրի թեմում՝ այցելելով թեմի տարբեր համայնքներ, ուսումնական-կրթական հաստատություններ, հիվանդանոցներ եւ կարիքավոր ընտանիքներ:

**ա. Քարոզչություն հանրակրթության ոլորտում**

*Նախադպրոցական ոլորտ*

Մարտ-մայիս ամիսներին իրականացվել են մարզային այցելություններ, որոնց ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ մանկապարտեզների տնօրենների հետ, քննարկվել առկա խնդիրները եւ նախադպրոցական հաստատություններում քրիստոնեական կրթություն իրականացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ որպես դիդակտիկ նյութ՝ բոլոր մանկապարտեզների բաշխվել է «Հայը եւ իր երգը» մանկական երգերի գիրքը:

Պատրաստվել եւ խմբագրվել են եկեղեցական տոներին նվիրված սցենարներ՝ գրքույ-

կի պեսքով հրապարակելու եւ նախադպրոցական ուսումնական հաստատություններին տրամադրելու համար:

Մշակվել է նախադպրոցական ոլորտում ներգրավված մանկավարժների գնահատման ու խրախուսման ամենամյա մրցույթի նախագիծ:

*Միջնակարգ կրթության ոլորտ*

Փետրվարի 18-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Օշականում կայացել է կլոր սեղան-քննարկում Կրթության եւ գիտության նախարար փիար Արմեն Աշոտյանի, կրթության գերատեսչության, ենթակառույցների, համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչների, դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների մասնակցությամբ, որը նպատակ ուներ գնահատել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի անցած ուղին, վերհանել առկա խնդիրներն ու նախանշել լուծման ուղիները: Քննարկման արդյունքում, ի թիվս մի շարք խնդիրների, առավել հրապապ նկատվեց պետական չափորոշիչում առարկան ամրագրելու խնդիրը, որի լուծմանն ուղղված ջանքերը արդարացան կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ: Արդեն երրորդ տարին ՀԵՊ առարկայից ՀՀ դպրոցներում անցկացվել է օլիմպիադա՝ գրանցելով դրական արդյունքներ: ՔԴԿ-ում ձեւավորվել է մասնագիտական խումբ՝ օլիմպիադայի տարածաշրջանային եւ մարզային փուլերի հարցաշարերի նմուշների կազմության համար:

2011-2012 ուսպարվա ծրագրով առաջին անգամ պարրական դպրոցում եւ ավագ դպրոցի հոսքային դասարաններում ՀԵՊ առարկան ամրագրվել է որպես երաշխավորված առարկա, որի արդյունքում շուրջ երեսուն դպրոցների 2-4-րդ դասարաններում ներդրվել է «Քրիստոնեական կրթություն» առարկան:

2012-2013 ուսումնական պարեշրջանի մեկնարկին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվել է «Կրթության մշակների օրհնության» արարողություն:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ եւ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ»-ի հետ համագործակցությամբ ՀՀ մի շարք դպրոցներում շարունակել է իրագործվել «Աջակցություն ընտանիքներին» ծրագիրը՝ Եկեղեցի-դպրոց-ընտանիք կապի սերտացման, հոգեւոր-ազգային, բարոյական արժեքների ամրապնդման եւ դպրոցում ստացվող հոգեւոր կրթության շարունակականության ապահովման նպատակով:

*Կիրակնօրյա կրթության ոլորտ*

ՀՀ ողջ տարածքում գործող թեմապատկան շուրջ յոթանասուն կիրակնօրյա (մեկօրյա) կրթօջախների գործունեությունը համակարգող ծրագիր-փաթեթի եւ ուսումնակրթական ծրագրի մշակման համար ստեղծվել է համապատասխան հանձնաժողով, որը պատրաստել է վերոնշյալ ծրագրերի նախագիծ-փաթեթները: Մշակվել է կիրակնօրյա կրթօջախների գործունեության միասնական կանոնակարգ: Կազմվել են նաեւ կիրակնօրյա դպրոցների տեղեկագրի, ուսուցչի անհատական թերթիկի, դասամատյանի, ավարտական վկայականի եւ անհրաժեշտ այլ ձեւաթղթերի նմուշները: ՙWorld Vision՚ բարեգործական կազմակերպության աջակցությամբ հուլիսի 16-21-ը կազմակերպվել է կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են շուրջ 150 ուսուցիչներ:

*«Էօրնեկեան» հանրակրթական դպրոց*

Տարվա ընթացքում դպրոցի տնօրենության կողմից վերահսկողության հիմնական

ուղղությունները կենտրոնացվել են ուսուցման որակի, արդյունավետության ապահովման եւ դպրոցի ներքին կարգապահության վրա: Ուսումնական տարվա սկզբին ձեւավորվել է հոգաբարձուների խորհրդի ընդլայնված նոր կազմ: Դպրոցում տնօրենին կից գործել են կրթական խորհուրդները եւ սոցիալապես անապահով աշակերտներին հայտնաբերելու եւ նրանց հաշվառելու հանձնախումբը: Հուլիսի 6-12-ը «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի աջակցությամբ դպրոցի 70 աշակերտների համար կազմակերպվել է կրթադաստիարակչական ամառային ճամբար, ինչը նպաստել է նաեւ աշակերտների ընկերային հաղորդակցման բարելավմանը: Դպրոցի աշակերտների թիվը 252 է : Ընթացիկ տարում դպրոցում կազմակերպվել է ուսուցիչների ատեստացիա, որի արդյունքում դպրոցում դասավանդող 18 ուսուցիչներ փոխարինվել են նոր՝ առաջատար մասնագետներով:

**բ. Քարոզչություն Հրատարակչական ոլորտում**

Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրենն է Գերշ. Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը: Անցնող տարում բաժնի կողմից իրականացվել են օտար լեզուներից եւ գրաբարից թարգմանությունների, եկեղեցագիտական, հայագիտական, մեկնողական գրականության, ինչպես նաեւ քրիստոնեական-բարոյագիտական, ուսուցողական գրքույկների հրատարակություններ: Լույս են ընծայվել վանական համալիրները ներկայացնող թերթոններ, աղոթագրքեր, սրբոց վարքերի եւ վկայաբանությունների վերաբերյալ աշխատություններ: Հրատարակվել են «Մայր Մաշտոց. Հատոր Ա., Գիրք Ա., Ըստ հնագոյն երկաթագրի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, Բնագիտական եւ կանոնացանկային յաւելուածովք» գիրքը՝ աշխատասիրությամբ Գեւորգ. Տ. Վարդանյանի, «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը /1974-2008 թթ./, կազմել է Տ. Արարատ քհն. Պողոսյանը, որը նվիրված է Հայ տպագրության 500-ամյակին եւ այլն: Ընդհանուր առմամբ անցյալ տարվա ընթացքում Հրատարակչական բաժինը տպագրության է հանձնել է 10 անուն հրատարակություններ, հրատարակության պատրաստ են 19-ը, իսկ խմբագրման փուլում են 12 աշխատանքներ:

*«Էջմիածին» ամսագիր*

«Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիրն է փիար Արշակ Մադոյանը: 2012 թվականին ամսագիրը տպագրել է կրոնագիտական, բանասիրական, մատենագիտական հոդվածներ: Հանդեսը պատշաճ կերպով անդրադարձել է կարեւորագույն օրախնդիրներին, եկեղեցական տոներին, հովվապետական այցելությունների, նշել է կարեւոր հոբելյանները: Իր հրատարակման թվանից (1944) սկսած առաջին անգամ մնագրի տպագրման աշխատանքներն ընթանում են բնականոն հունով՝ (2012 թ. ԺԲ. համարը խմբագրության կողմից ստորագրվել է տպագրության դեկտեմբերի 24-ին, իսկ լույս է տեսել նույն թվականի դեկտեմբերի 28-ին) ըստ ժամանակացույցի: Պարբերաբար տպագրվում են Հայրապետական կոնդակներն ու օրհնության գրերը, պաշտոնական հաղորդագրություններն ու լուրերը: Ամսագիրն արտացոլում է թեմերի հոգեւոր-մշակութային կյանքը: 2012 թ. տպագրվել են միջնադարյան անտիպ բնագրեր, մեկնություններ, եկեղեցական վիմագրության, որմնանկարչության վերաբերյալ արվեստաբանական հոդվածներ: Ավանդական դարձած բաժիններին ավելացել են «Յոբելեան», «Ճեմարանականներ», «Հոգեւոր ընթերցումներ» բաժինները:

*«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ*

«Քրիստոնյա Հայաստան» թերթի գլխավոր խմբագիրն է տիկին Աստղիկ Ստամ-

բոլցյանը: 2012 թվականին կանոնավոր կերպով լույս են ընծայվել նախատեսված 24 համարները, ինչպես նաեւ հոգելույս Գարեգին Ա. Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 80-ամյակին նվիրված «Բացառիկ» համարը: Թերթը պարբերաբար տպագրել է նաեւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տրամադրած բոլոր լրատվական նյութերը, Նորին Սրբության պատգամներն ու ուղերձները, թեմերի տրամադրած նյութերը, տոնախոսականներ եւ այլն: Թերթում պաշտոնական լրատվական նյութերի կողքին մշտապես շարունակվել են «Հայոց կաթողիկոսներ» շարքը, «Կից սենյակում» խորագիրը կրող հոգեւոր զրույցների, ինչպես նաեւ «Հովիվն ու նրա հոտը»՝ ընթերցողներին հուզող հարցերին անդրադարձող շարքերը: Տպագրվել են գրականագիտական, լեզվաբանական, պատմական բազում հոդվածներ, որոնց թվում նաեւ Մեծ Եղեռնի 100-ամյակին ընդառաջ նյութեր, որոնք նոր երեւույթ են Եղեռնի՝ մերօրյա անդրադարձումներում: Պարբերաբար անդրադարձ է եղել նաեւ քրիստոնեական՝ ազգային եւ ընդհանրական խորհրդանշաններին, եկեղեցական տոների ազգային ավանդույթներին:

*գ. Քարոզչություն երիտասարդության շրջանում*

Երիտասարդների շրջանում քարոզչությունն իրականացվում է թեմերում գործող երիտասարդաց միությունների եւ բուհերի հոգեւոր պատասխանատու Բարեշնորհ Գեղամ սրկ. Ավետիսյանի միջոցով, որոնց աշխատանքը համակարգվում է ՀԵՀԵԿ-ի կողմից՝ ղեկավարությամբ Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանի եւ ՀԵՀԵԿ ԿԳ տնօրեն Գեւորգ Մկրտչյանի, ովքեր մի շարք հանդիպումներ են ունեցել ՀՀ Սփյուռքի նախարարության եւ ՀՀ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության համապատասխան բաժինների հետ, որոնց արդյունքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ փոխգործակցության եւ երկուստեք կապի հաստատման նպատակով: Երիտասարդություն հասարակական կազմակերպության համատեղ աշխատանքների արդյունքում ՀՀ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությանը ներկայացվել է ՀԵՀԵԿ-ի կայքի ստեղծման ծրագիր:

ՀԵՀԵԿ կենտրոնական գրասենյակը կազմակերպել ու իրականացրել է տարբեր ծրագրեր, ուխտագնացություններ եւ այլ միջոցառումներ՝ ազգային-եկեղեցական տարբեր՝ ինչպես Ս. Սարգսի, Սրբոց Վարդանանց եւ այլ տոների առիթներով: Երեւանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի երիտասարդական հանձնաժողովի հետ իրականացվել է «Մաքուր Երեւան» ծրագիրը : ՀԵՀԵԿ-ը մասնակցել է Երեւանի 2794 ամյակին նվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքներին : ՀԵՀԵԿ կենտրոնական գրասենյակում յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվել են սեմինարներ եւ քննարկումներ՝ Հայաստանի Հանրապետության բուհերի ուսանողների, հայտնի գիտնականների եւ հոգեւորականների մասնակցությամբ, որոնց ընթացքում ներկայացվել եւ քննարկվել են քրիստոնեական արժեհամակարգին, հավատին, ժամանակակից աշխարհում ճիշտ հոգեկերտվածքի ձեւավորմանը եւ երիտասարդներին հուզող մի շարք հարցերին առնչվող բազմաթիվ խնդիրներ:

**դ. Քարոզչություն ՀՀ Զինված ուժերում**

ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդն է Գերշ. Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: ՀՀ Զինված Ուժերում իրենց ծառայությունն են բերում 45 սպասավորներ՝ 1 աբեղա, 11 քահանա եւ 32 սարկավագ, որոնցից 1 աբեղա, չորս քահանա եւ երկու սարկավագ ԶՈՒ-ում նշանակված են մշտական ծառայության:

2012 թ. ՀՀ Զինված ուժերում եկեղեցական տոների առիթով կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Բանակի օրվա կապակցությամբ բոլոր զորամասերում տեղի ունեցած տոնական միջոցառումներին մասնակցել են տվյալ զորամասի հոգևորականները, իսկ բանակի բարձրաստիճան սպայական կազմը, ընկալյալ ավանդույթի համաձայն, մասնակցել է Մայր Աթոռում մատուցվող Սրբազան Պատարագին:

Անցած տարի Հայոց բանակի կազմավորման 20-ամյակի առիթով Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով Հայոց բանակին պահապան հռչակվեց Մայր Աթոռում պահվող հայոց Աշոտ Բ. Երկաթ Բագրատունի թագավորի խաչը: Այս առիթով պատրաստվել է պատմական Սուրբ Խաչի կրկնօրինակը, որի կենտրոնում զետեղվել է Տիրոջ խաչափայտի մասունքի Սուրբ Նշխար: Նորին Սրբության կողմից Սուրբ Խաչը հանդիսավորապես օծվել և հանձնվել է ՀՀ Պաշտպանության նախարարությանն ու բանակի հոգևոր առաջնորդությանը: «Ս. Ներսես Շնորհալի» Հայրապետական շքանշանով պարգևատրվել են բարձրաստիճան սպաներ և «ՀՀ ԶՈւ 20-ամյակ» հուշամեդալով՝ բարձրաստիճան հոգևորականներ: Հաջորդող ամիսների ընթացքում Խաչաղորոշը տարվել է Հայաստանի առաջնագծային զորամասեր, կատարվել է զորքի օրհնության կարգ:

ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդը մասնակցել է Պաշտպանության Նախարարության կողմից կազմակերպված կարևոր միջոցառումներին, այցելություններ կատարել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, Հայոց Բանակի զորամասեր: Անցած տարի Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կատարվել է նաև եկեղեցու հիմնարկեք: Պատրաստվել է ՀՀ Պաշտպանության Նախարարության և Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասավորների համատեղ միջոցառումների ծրագիրը 2013 թ. համար:

**ե. Քարոզչություն քրեակատարողական հիմնարկներում**

ՔԿՀ պատասխանատուն է Հոգշ. Տ. Ռուբեն արեղա Զարգարյանը: 2012 թ. ՔԿՀ հոգևոր սպասավորության բաժինը շաբաթական կտրվածքով նվազագույնը մեկ, առավելագույնը երեք այցելություններ է իրականացրել ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գործող 12 քրեակատարողական հիմնարկներ: Տարվա ընթացքում Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում պարբերաբար մատուցվել է Սուրբ Պատարագ: Կատարվել են բանտարկյալների մկրտություններ, սրբապատկերի օծում, ինչպես նաև ազգային և եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ: Համապատասխան արձագանք են ստացել ավելի քան 30 նամակներ՝ դատապարտյալների, նրանց հարազատների կամ իրավապաշտպան կազմակերպությունների ու մտավորականների կողմից Վեհափառ Հայրապետին հասցեագրված:

Քրեակատարողական հիմնարկներին տրամադրվել է գրականություն, մամուլ և քարոզչական այլ նյութեր: Աշխատանքներ են իրականացվել դատապարտյալների ընտանիքների, կալանքից ազատված դատապարտյալների հետ՝ ցուցաբերելով նյութական և բարոյա-հոգեբանական աջակցություն:

**զ. Քարոզչություն Զանգվածային լրատվական միջոցների ոլորտում**

*«Շողակաթ» հեռուստաընկերություն*

«Շողակաթ» ՀԸ տնօրենն է Տիկին Մանյա Ղազարյանը: 2012 թ. «Շողակաթը» հեռարձակվել է «Հոգևոր-մշակութային ՀԸ ՓԲԸ» հեռուստաալիքով, որն ընդգրկման ծավալով երրորդն է հանրապետությունում (Հ1-ից և Հ2-ից հետո): Ընթացիկ տարում արտադրված սեփական հաղորդումների ծավալը կազմել է մոտ 232,5 ժամ՝ որոնցից.

ա. հոգեւոր-եկեղեցական թեմաներով՝ 44%:

բ. հոգեւոր-մշակութային՝ 26%:

գ. մշակութային՝30%:

«Շողակաթ» ՀԸ հեռարձակել է 30 անուն հիմնական հաղորդաշարեր եւ շուրջ 40 անուն առանձին հաղորդումներ եւ ֆիլմեր: 2012 թ. նկարահանվել են 11 անուն համերգային ծրագրեր:

2012թ. «Շողակաթ» ՀԸ համագործակցել է մի շարք տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ: 2012 թ. «Շողակաթ» ՀԸ համագործակցությամբ ԵՀԽ հայաստանյան կլոր սեղան բարեգործական հիմնադրամի, «Վորլդ Վիժն» կազմակերպության եւ ՀՀ Մշակույթի նախարարության պատրաստել է տեսաֆիլմեր եւ տեսահոլովակներ.

1. ՀՀ Մշակույթի նախարարության պատվերով պատրաստվել է «Հովհաննես Թումանյան. Հավերժի ճամփորդը» երկմասանի վավերագրական տեսաֆիլմը:

2. ՀՀ Մշակույթի նախարարության պատվերով պատրաստվել է «Վազգեն Բաժբեուկ Մելիքյան. Նոթեր» վավերագրական ֆիլմը:

3. «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության պատվերով «Տարածաշրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման» ծրագրի շրջանակում պատրաստվել է «Հեռու եւ մոտ վտանգը» տեսաֆիլմը:

4. «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության պատվերով «Հոգեւոր ծրագրերի» շրջանակում պատրաստվել է «Դեպի եկեղեցի» ընդհանուր վերնագրով երկու տեսաֆիլմ: Նույն կազմակերպության հետ 2012թ. կնքած պայմանագրի համաձայն մինչեւ 2013թ. սեպտեմբեր նկարահանվելու է եւս երկու տեսաֆիլմ:

5. Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» միության գրասենյակի հետ համատեղ պատրաստվել է «Նորից այնտեղ՝ մեր տուն» եւ «Աստվածամոր տաճարը» ֆիլմաշարը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի եւ Երուսաղեմի Ս. Աստվածածին տաճարի մասին:

6. Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի պատվերով պատրաստվել է «Վանքի մեղրը» տեսաֆիլմը:

*«Լույս» հեռուստաընկերություն*

«Լույս» հեռուստաընկերության տնօրենն է փիար Ռսկան Մամիկոնյանը: ՀԸ, որ գործում է «Նոր դար, նոր հազարամյակ» ՍՊԸ արտոնագրով, աշխատել է շուրջօրյա ռեժիմով եւ նկարահանել սեփական արտադրության մի շարք հաղորդումներ: Ըստ այդմ տարվա կտրվածքով սեփական արտադրության հաղորդումների ծավալը կազմել է շուրջ 131 ժամ: Հաշվի առնելով նաեւ կրկնությունները, նշված թիվը քառապատկվում է գերազանցելով 520 ժամը: Հաշվետու ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել ամենօրյա «Բանբեր» լրատվական ծրագիրը եւ մամուլի ամենօրյա տեսությունը: Մնացյալ եթերաժամը լրացվել է «Շողակաթ» հեռուստաընկերության սեփական արտադրանքով եւ տրամադրած ֆիլմերով, հաղորդաշարերով, համերգային եւ այլ ծրագրերով: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել նաեւ սեփական արտադրության հոգեւոր հաղորդաշար պատրաստելու ուղղությամբ եւ արդեն իսկ նկարահանվել է երկու հաղորդում:

**ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

Մայր Աթոռի Վանորեից տեսուչն է Գերշ. Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը:

Անցնող տարում եւս վանական առօրյայով ապրել եւ իրենց հոգեւոր գործունեությունն

են իրականացրել Ս. Խոր Վիրապի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի եւ Ս. Հառիճավանքի վանական համալիրները: Վանքերում կանոնավորապես կատարվել են ծիսապաշտամունքային արարողություններ: Ընթացիկ տարում վանքերում բազմամարդ ուխտագնացություններով եւ մասունքի դուրս բերումով մատուցվել է Սուրբ Պատարագ եւ մեծ շուքով նշվել տվյալ Սուրբերի հիշատակության օրերը:

Հիշյալ վանքերում անցնող տարվա ընթացքում արձանագրվել են 3809 մկրտություն եւ 1950 պսակադրություն.

Ս. Գայանե-մկրտվել են 758 հոգի, կատարվել է 727 պսակադրություն:

Ս. Հռիփսիմե- մկրտվել են 442 հոգի, կատարվել է 509 պսակադրություն:

Ս.Շողակաթ- մկրտվել են 126 հոգի, կատարվել է 129 պսակադրություն:

Ս. Գեղարդավանք- մկրտվել են 1.111 հոգի, կատարվել է 97 պսակադրություն:

Ս. Խոր Վիրապ- մկրտվել են 1342 հոգի, կատարվել է 488 պսակադրություն:

Ս. Սեւանավանք- մկրտվել են 397 հոգի, կատարվել է 82 պսակադրություն:

Ս. Հառիճավանք- մկրտվել են 30 հոգի, կատարվել է 15 պսակադրություն:

Ս. Գայանե վանքում այսօր ապրում եւ իրենց օգտակար ծառայությունն են բերում 3 միանձնուհիներ:

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր տեսուչն է Գերշ. Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Երիտասարդաց միությունում գործում են մանրանկարչության եւ ասեղնագործության խմբակներ, ինչպես նաեւ մանուկների համար կազմակերպվում են հոգեւոր երգերի ուսուցման դասընթացներ: Շաբաթական երեք անգամ՝ Երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցու հոգեւոր սպասավորների նախաձեռնությամբ տեղի են ունենում Սուրբ գրային սերտողություններ եւ քարոզխոսություն հավատացյալների հետ:

Եկեղեցու հոգեւոր սպասավորների մասնակցությամբ կազմակերպվել են ուխտագնացություններ Հայաստանի տարբեր վանքեր ու եկեղեցիներ, պարբերական այցելություններ ծերանոցներ, մանկատներ ու հատուկ դպրոցներ, ինչպես նաեւ հանրակրթական դպրոցներ եւ բուհեր: Անցնող տարվա ընթացքում եկեղեցում մկրտվել են 1036 հայորդի եւ կատարվել է 427 զույգի պսակադրություն:

## ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցնող տարում արդյունավոր են եղել նաեւ Մայր Աթոռի շինարարական աշխատանքները, որոնք համակարգվել են Ճարտարապետաշինական բաժնի կողմից: Բաժնի տնօրենն է Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ տիար Արտավազդ Նազարեթյանը: ՃՇ բաժնի կողմից նախագծվել, ընթացքի մեջ են եւ ավարտին են հասցվել մի շարք աշխատանքներ: Ստորեւ ներկայացված են կարեւորները.

*Ավարտված նախագծերից են՝*

1. Մայր Աթոռի մոմավառության սրահի նախագիծը,
2. Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու եւ ԳՀՃ-ի հարակից տարածքի բարեկարգման նախագիծը,

3. Մատենադարանի տարածքի բարեկարգման նախագիծը,
4. Հաղարծնի վանական համալիրի օժանդակ կառույցների նախագիծը,
5. Հառիճավանքի վեհարանի վերակառուցման նախագիծը,

*Ընթացքի մեջ են՝*

1. Էօրնեկեան վարժարանի կառուցման նախագիծը,
2. Գեղարդավանքում թանգարանի կազմակերպման նախագիծը,
3. Տրդատակամարի վերակառուցման նախագիծը,
4. Սեւանավանքի եւ Վազգենյան դպրանոցի համալիր շինարարական ծրագրի մշակում

*Ավարտվել են՝*

1. Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու շինարարությունը,
2. Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի 2-րդ մասնաշենքը
3. Երեմյան խցերի փանիքի պղնձապատում
4. «Վաչե եւ Թամար Մանուկյաններ» մատենադարան
5. Մայր Աթոռի տարածքի բարեկարգում եւ կանաչապատում
6. Հառիճավանքի դպրատուն
7. «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոն (I փուլ)

*Շինարարության ընթացքում են՝*

1. Եկեղեցու շին. աշխատանքները Երեւանի Էրեբունի թաղամասում
2. Եկեղեցու շին. աշխատանքները Երեւանի Արաբկիր թաղամասում
3. Եկեղեցու շին. աշխատանքները Բերդ քաղաքում
4. Եկեղեցու շին. աշխատանքները Սեւան քաղաքում
5. Գյումրու Հայորդյաց տուն
6. «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոն (II փուլ)
7. Վեհարանի նորոգում
8. Գարեգին Ա. կրթական կենտրոն
9. Երեմյան խցերի նորոգում
10. Երեւանի Սուրբ Կաթողիկե եկեղեցու տարածքում Սուրբ Աննա եկեղեցու եւ Հայրապետական նստավայրի կառուցում :

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նախորդ տարի, 2012թ. նույնպես շարունակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը սոցիալական աջակցության ոլորտում: Անցնող տարի եւս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է համագործակցությունը հասարակական եւ մշակութային կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների հետ: Համագործակցության արդյունքում կազմակերպությունների կողմից հատկացված հումանիտար օգնության շնորհիվ՝ սոցիալական բարեգործական ծրագրեր են իրականացվել Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի քաղաքներում եւ գյուղերում: IRD, UMCOR, World Vision, ECLOF, ARDA, ԵՀԽ Կլոր սեղան եւ այլ բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ սոցիալական օգնություն է ցուցաբերվել առավել կարիքավոր ընտանիքներին, հաշմանդամ, միակողմանի եւ երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, միայնակ ծերերին: Հաստա-

րական եւ Բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրվել են սնունդ, տնտեսական, գրենական եւ հիգիենիկ պարագաներ: Ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են ուսուցողական-դաստիարակչական միջոցառումներ եւ հանդիպումներ հասարակական եւ մշակութային գործիչների հետ:

Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի մեջ են մտնում առողջապահության ոլորտը, բարեգործական ճաշարանները, ծնողազուրկ երեխաներին նպաստավորելը եւ այլն:

Նյութական օգնությունից եւ աջակցությունից զատ, հոգեւոր եւ նյութական օգնություն է ցուցաբերվել նաեւ զանազան տեղական հասարակական կազմակերպություններին եւ միություններին:

«Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի գործադիր տնօրենն է Տիար Արմեն Մուրադյանը: Ընթացիկ տարում եւս Մայր Աթոռի «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոն բնականոն կերպով շարունակել է ծավալել իր գործունեությունը՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելով այցելուներին:

Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագերի մեջ են մտնում նաեւ Մալաթիայի, Արաբկիրի, Նորքի եւ Էջմիածնի բարեգործական ճաշարանները: 2012թ. ընթացքում ճաշարաններում սնվողների միջին թիվը կազմել է 200 մարդ, որոնք տվյալ համայնքի բնակիչներն են: Ճաշարանի գույքը, անձնակազմի անձնական հիգիենան, աշխատանքի ներկայանալու ժամը, ճաշերի որակը եւ սնվողներին ժամանակին ու պատշաճ կերպով սպասարկելը գտնվում է տնօրենների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Արարատյան հայրապետական թեմում գործող «Ծնողազուրկ երեխաների օգնության հիմնադրամ»-ի կողմից նպաստներ են տրամադրվել 835 ընտանիքների 1336 որբ երեխաների:

Սոցիալական ծրագրերի թվում կարեւոր ձեռնարկ էր Արաբկիրում «Նազզաշյան մանուկների տուն» կենտրոնի բացումը, որտեղ 10 տարեկանից բարձր 20 աղջիկներ ստանում են մասնագիտական կողմնորոշում եւ սոցիալական աջակցություն, հմտանում զանազան արհեստների մեջ:

Սիրիայի ներքաղաքական կացության հետեւանքով ծանր վիճակում հայտնված սիրիահայ համայնքին աջակցելու նպատակով Մայր Աթոռը թեմերում նախաձեռնեց դրամահավաք, որի առաջին գումարը՝ 200.000 ԱՄՆ դոլար փոխանցվեց Դամասկոսի թեմին՝ համայնքի առաջնահերթ կարիքների բավարարման համար: Հայաստանում ապաստան գտած սիրիահայերին օգնելու քայլեր եւս ձեռնարկվեցին: Մայր Աթոռում գործող Կլոր սեղան հիմնադրամի միջոցով 200 ընտանիքների ապահովվում է ամսական սնունդ եւ անհրաժեշտ այլ պարագաներ:

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Տերը պահի պահպանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, նրա Գահակալին, եկեղեցական եւ աշխարհական դասերին՝ Հայ Եկեղեցու հավատավոր զավակներիս, շարունակելու մեր ծառայությունները եւ նոր հաջողություններ պարգեւի մեր ջանքերին, մեր ծրագրերին եւ բոլոր բարի գործերին՝ ի նպաստ մեր Սուրբ Եկեղեցու պայծառության եւ ի վայելումն հավատավոր մեր զավակաց. Ամեն: